Արձանագրություն N 3

Ճամբարակ համայնքի քաղաքացիների սպասարկման գրասենյակի գույքի ձեռքբերման «ԳՄՃՀ-ԳՀԱՊՁԲ-19/09» ծածկագրով գնանշման հարցումով գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Ճամբարակ « 06 » սեպտեմբերի 2019թ. ***ժամը 16:00-ին***

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ստեփանյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հ.Մարտիրոսյան, Ա.Թամրազյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Մարկոսյան

1. Բանակցությունների վարման մասին

/Ա.Ստեփանյան /

1.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին » ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ «ԳՄՃՀ – ԳՀԱՊՁԲ – 19/09» ծածկագրով գնման ընթացակարգի որոշ չափաբաժինների մասով ընտրված մասնակցին որոշելու նպատակով անցկացվել է նվազեցման բանակցություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ- 0:

2.Գնանշման հարցում ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի մասին

/Ա.Ստեփանյան /

2.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԳՄՃՀ – ԳՀԱՊՁԲ – 19/09» ծածկագրով գնման ընթացակարգի

-1-ին և 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Արգավանդ կահույք» ՍՊԸ-ն:

3-րդ,4-րդ,5-րդ,6-րդ,7-րդ,9-րդ,10-րդ,11-րդ,12-րդ,13-րդ, չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել « Պրոֆ Ալ» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ- 0:

3. Տեղեկություններ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կատարված հարցման և որակավորման չափանիշների վերաբերյալ

/Ա.Ստեփանյան /

3.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին » ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի « Ֆինանսական միջոցներ » որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

3.2 Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում /երեք աշխատանքային օր/ ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ- 0:

4. Ընթացակարգը որոշ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին

/Ա.Ստեփանյան /

-Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը գնման ընթացակարգը 8-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

-Հաստատել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ- 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

/Ա.Ստեփանյան /

-Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 15:00-ին հասցեն՝ ք.Ճամբարակ, Գ.Նժդեհի 125, Քաղաքապետարանի վարչական շենք, N 15 աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Ստեփանյան

Անդամներ՝ _____ Հ. Մարտիրոսյան

_____ Ա.Թամրազյան

_____ Ա.Դանիելյան

_____ Հ.Դալլաքյան

Քարտուղար՝ _____ Լ.Մարկոսյան